

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
NATIONAL ACADEMY SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ • YEREVAN STATE UNIVERSITY

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
МАТЕНАДАРАН ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА • MATENADARAN AFTER MESROP MASHTOTS



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
ԱՐՇԱԼՈՒՅՍ
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՅ

МЕЖДУНАРОДНАЯ КОНФЕРЕНЦИЯ
НА ЗАРЕ АРМЯНСКОГО ХРИСТИАНСТВА

INTERNATIONAL CONFERENCE
AT THE DAWN OF ARMENIAN CHRISTIANITY

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

YEREVAN STATE UNIVERSITY

MATENADARAN AFTER MESROP MASHTOTS

INTERNATIONAL CONFERENCE

AT THE DAWN OF ARMENIAN CHRISTIANITY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МАТЕНАДАРАН ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

МЕЖДУНАРОДНАЯ НАУЧНАЯ КОНФЕРЕНЦИЯ

НА ЗАРЕ АРМЯНСКОГО ХРИСТИАНСТВА

THE ABSTRACTS OF REPORTS / ТЕЗИСЫ ДОКЛАДОВ

PUBLISHING HOUSE "GITUTYUN" NAS RA
ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА

YEREVAN

ЕРЕВАН

2016

ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ

THE ABSTRACTS OF REPORTS / ТЕЗИСЫ ДОКЛАДОВ

ՀԵԹԱՆՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆ. ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Մեր թվարկության առաջին դարերում, որոնք հայտնի են որպես Առաքելական շրջան, Մեծ Հայքում Արտաշիսյան թագավորության անկումից հետո, երկիրը մնում էր Հռոմեական կայսրության ազդեցության ոլորտում: Հռոմի ու Պարթևստանի քաղաքական նկրտումների միջև մնացած և իր անկախության համար պայքարող Արշակունյաց Հայաստանը, արտաքին քաղաքական բարդ իրավիճակից բացի, գտնվում էր նաև դավանաբանական-գաղափարաբանական գործընթացների խառնարանում:

Երկրում տակավին գերիշխում էր հեթանոսական դիցապատական համակարգը, իր բոլոր բաղկացուցիչներով՝ դիցարանով, տոնա-ծիսակարգով, տաճարներով, հնուց եկող շատ ավանդույթներով: Սա հայոց հին հավատքի պատմական զարգացման վերջին փուլն էր, որը պայմանականորեն կարելի է անվանել Երվանդունի-Արտաշիսյան, քանի որ այս արքայատների օրոք էր ձևավորվել: Տակավին գործունե էին վաղնջական ժամանակներից եկող հավատալիքների համակարգը, ազգածին նախնիների մասին ավանդապատումները, համահայկական դիցարանն իր աստված-աստվածուհիներով, նրանց նվիրապետական ու ծիսական կարգով:

Այս ժամանակաշրջանը նաև հելլենիստական դարաշրջանի երկրորդ փուլն էր, որի ժամանակ դիցարանի աստվածները համադրվում էին օլիմպիական աստվածների հետ, հաճախ հայկական անունները փոխարինվում էին հունականներով, ինչն ակնհայտ է ոչ միայն արձանագրություններում (օր.՝ Կոմմագենեի հնա-

վայրում), այնպես էլ՝ անտիկ հունա-հռոմեական (Հերոդոտոս, Քսենոփոն, Ստրաբոն) և վաղմիջնադարյան հայկական (Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Փավստոս Բուզանդ, Ղազար Փարպեցի) մատենագիր աղբյուրներում:

Մյուս կողմից, ուժեղ էր պարսկական մշակույթի ազդեցությունը, զրադաշտական կրոնը Հայաստանում արմատավորելու ձգտումները երբեք չէին դադարում, բայց այդպես էլ հաջողության չհասան: Փոխարենը՝ միհրականությունն էր տարածված, հատկապես Երվանդունիների արքայատան շրջանում, երբ Անահիտ-Արամազդ-Միհր երրորդությունը հանդես էր գալիս որպես գերագույն եռյակ:

Երրորդ կողմից, Հայաստան էին գալիս նոր կրոնի քարոզիչները, որոնց գործունեության արդյունքում ժամանակի ընթացքում կազմավորվում էին քրիստոնյա առաջին համայնքները: Հայտնի է, որ Քրիստոսի աշակերտներից Թադեոս առաքյալը Հայաստանում քրիստոնեություն է քարոզել Սանատրուկ Արշակունի թագավորի իշխանության օրոք, դարձի բերելով բազմաթիվ հայերի, նույնիսկ ամբողջ տոհմերի (Ոսկյանք, Սուքիասյանք) և անգամ արքայադուստր Սանդուխտին: Թադեոսին հետևած Բարդուղիմեոս առաքյալը Հայաստան է եկել Սանատրուկի թագավորության 29-րդ տարում, քարոզել նախ Գողթնում, ապա Հայաստանի կենտրոնական շրջաններում, Անձևացյաց գավառում հիմնել Հոգեաց վանքը, ուր զետեղել է Երուսաղեմից իր հետ բերած Աստվածամոր պատկերը:

Թադեոսի և Բարդուղիմեոս առաքյալների քարոզչության արդյունքում, ժողովրդի տարբեր խավերից բացի, Քրիստոսի հետևորդ են դարձել Սանդուխտ արքայադուստրն ու Ոգուհի արքայաքույրը, որոնք, ինչպես և առաքյալները, նահատակվել են

Սանատրուկի հրահանգով, իրենց հետևից թողնելով, սակայն, նոր կրոնի ծիւերը՝ ի դեմս քրիստոնյա համայնքների: Առաքելական ժամանակներից մինչև 3-րդ դարի վերջը քրիստոնեությունն աստիճանաբար տարածվել է Հայաստանում: Դրան նպաստում էր նաև այն հանգամանքը, որ 1-ին դ. քրիստոնեությունն արդեն տարածվել էր հարևան Կապադովկիայում, Եդեսիայում, Ադիաբենեում, որոնց հետ առևտրային և մշակութային աշխույժ կապերը նպաստավոր պայմաններ էին ստեղծում նոր կրոնի ու գաղափարախոսության՝ Հայաստան ներթափանցելու համար: Առաքելական քարոզչությունից հետո Հայաստանում հիմնվել են եպիսկոպոսական աթոռներ Գողթնում, Արտագում (Աշտիշատ), որոնք ունեցել են եպիսկոպոս առաջնորդներ:

Այս ամենով հանդերձ, հայոց դիցապաշտական համակարգը մ.թ. 1-3-դդ. մնում էր համահայկական դիցարանը, որը հիմնականում աստվածընտանիք էր, որի գլուխ կանգնած էին դիցահայր Արամազդը և դիցամայր Անահիտը, որոնք էլ գերագույն զույգն էին կազմում: Գերագույն զույգին հետևում էին գլխավոր դիցերը՝ Աստղիկը և Նանեն, Վահագնը և Միհրը, որոնք գերագույն զույգի ուսուրերն ու դուստրերն էին, որոնց էլ հետևում էին մյուս աստվածները՝ Տիրը, Ամանորը, Վանատուրը, Դեմետրը, Գիսանեն, Սպանդարամետը, Բարշամինը, որոնք այս կամ այն չափով առնչվում էին գերագույն զույգի ու գլխավոր աստվածների հետ:

Կառուցվածքային այս բնորոշիչներից զատ, **համահայկական դիցարանին հատուկ էին գործառութային բնորոշիչներ՝ աստված-աստվածուհիներից յուրաքանչյուրն անձնավորում էր պաշտամունքային համակարգի որևէ բնագավառ, հիմքում**

ունենալով դիցաբանական պատկերացումներ, որոնք վաղնջական անցյալից էին ակունքվում: Դրանցից են.

Ա/ *տիեզերաստեղծական և աշխարհաստեղծական առասպելներ*. պատկերացումը վաղնջական ժամանակի մասին, երբ գերբնական ուժերի կողմից ստեղծվել է ամեն ինչ. հայկ. Հայա (էա)՝ «երկնային ծով» (հուն. Քաոս/Կոսմոս). շումեր-աքքադական աղբյուրները և Աստվածաշունչը Ջրհեղեղի մասին, մարդկության փրկության վայրը և աստվածաշնչային դրախտը՝ Հայկական լեռնաշխարհում,

Բ/ *ժամանակի և տարածության անձնավորումը և նույնացումը գերագույն աստծո հետ, որը տիեզերքում ունի իր մոլորակը* (Արամազդ – Լունթագ/Յուպիտեր): Հայկյան տոմար. Ամսանունները Հայկի ուսուրերի ու դուստրերի անուններով,

Գ/ *բնության մարդեղացում* (Վահագն-արեգակ), աստվածների բնակության վայրը՝ երկինք. Արարատ/Մասիսը՝ Արև-աստծո հանգրվան), բնությունը՝ աստվածների հանդիպման վայր՝ Վանա ծովակ, Արագած, Արայի լեռ, Մշո դաշտ),

Դ/ *գերագույն աստվածների եռամիասնություն*. Բիայնական (ուրարտական) գերագույն եռյակ աստվածներ խալդին, Թեյշեբան և Շիվինին (իրենց դիցուհիներով հանդերձ),

Ե/ *բարու, դրականի և բարոյականի վեհացում, չարի, բացասականի ստորացում*. հին աստվածները՝ միայն դրական հատկանիշներով (Վահագնի հարդ գողանալն իր ժողովրդին տաքացնելու համար /Հարդագողի ճամփա/, Աստղիկի մշուշ կապելն իր գեղեցիկ մերկությունը թաքցնելու համար /Մուշ-մշուշ/). Արամազդի՝ բարի սկիզբը խորհրդանշելը, չարը ստորին ոգիների մակարդակում),

Չ/ արական և իգական սկիզբներ. արև/կրակ և ջուր/հող՝ Ար/Նար (Արև-Ծով, Արա/Ծովինար). Ար-Արարատ / Նար-Ծովինար (Սասնա Ծռերի հերոսների մայր, անարատ հղիություն),

Է/ աստվածընտանիքի, պողաբերության, արգասավորության գաղափարները. Արամազդ և Անահիտ զույգը՝ աստվածների հայր և մայր, զավակները՝ Միհր, Վահագն, Աստղիկ, Նանե, որոնք նաև ժողովրդի պաշտպաններ են, մարդկանց գիտություն, արվեստ ու արհեստ սովորեցնողներ,

Ը/ գրի և գրչության գաղափարի անձնավորում և աստվածացում, գուշակության արվեստի հովանավոր. Տորք (Հայկի ծոռ, քանդակի, գորգագործության հովանավոր), Անուշավան Սոսանվեր (Սոսյաց անտառ), Տիր (Արամազդի դպիր, երազահան, երազացույց),

Թ/ տարեսկզբի, բերքի և հյուրընկալության գաղափարների անձնավորում. Ամանոր, Վանատուր, Ամենաբեր,

Ժ/ հողի և ստորերկրայքի անձնավորում. երկսեռ աստվածություն՝ Սանդարք (դժոխքի, ստորերկրայքի տիրակալ), Սպանդարամետ (հողի, արմատների դիցուհի),

Առաջինը քրիստոնեությունը որպես պետական պաշտոնական կրոն ընդունած հայերիս դիցամտածողության առանձնահատկություններից էր բխում նոր ուսմունքի ընկալումը, քանի որ քրիստոնեության հիմնական գաղափարներն արդեն առկա էին հայոց նախաքրիստոնեական պատկերացումներում: Դրանց մեծ մասը ժառանգվեց նոր հավատքի կողմից՝ մասամբ նույնությամբ, մասամբ ձևափոխված.

ա/ Հայր աստծո գաղափարը. «Աստուած», «Արարիչ» բառերը, ազգածին աստվածներ, պատկերամարտություն, աղոթքը (հմմտ. մյուս դավանանքների հետ),

բ/ Սուրբ Երրորդության գաղափարը, որը դեռ բիայնական դիցարանում էր առկա,

գ/ լույսի պաշտամունք և անձնավորում՝ արևային աստվածներից մինչև Հիսուս Քրիստոս և Մարիամ Աստվածածին, «Արևագալի երգեր»՝ «Առավոտ լուսո, Արեգակն արդար»,

դ/ փրկիչ աստծո գաղափարը՝ Հիսուս Քրիստոս (Օծյալ Փրկիչ). առաջնորդ հերոսի փրկչական գործունեությունը՝ Վահագն-Միհր,

ե/ մեռնող-հառնող աստված Արա-Քրիստոս, «Սասնա Ծռեր»ում՝ «Հացն ու գինին, տեր կենդանին»,

զ/ դիցամոր/տիրամոր գաղափարը՝ Նար-Արուբանի/Բագբարտու-Անահիտ-Մարիամ, անարատ հղիության գաղափարը (Ծովինար),

է/ շարականներ՝ հին հոգևոր երգերից սերված, Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, Մովսես Խորենացու, Ներսես Շնորհալու հեղինակած շարականներ (Հարության, Ապաշխարության, Վարդավառի և մյուս շարականները),

ը/ Նարեկացու «Մարեան»-ը՝ «Խոսք առ Աստուած», «Տաղ Վարդավառի»,

թ/ «Սասնա Ծռեր»-ի վաղնջական ակունքները՝ Հայկ-Սանասար, Նար-Ծովինար, Վահագն-Դավիթ, Միհր-Միեր,

Հին և միջնադարյան դիցամտածողության դրսևորումներն առկա են նաև ներկայիս մտածելակերպում և սովորույթակարգում (հաճախ՝ ժողովրդական քրիստոնեության տեսքով).

ա/ քրիստոնեության ազգայնացում (դեռևս Գրիգոր Լուսավորչի և Տրդատ Մեծի կողմից),

բ/ տոմար՝ Հայկյան թվական / Քրիստոսի թվական,

գ/ *տոնակարգ՝* հեթանոսական տոների վերափոխումը քրիստոնեականի (Տրնդեզ, Ծաղկազարդ, Ձատիկ, Վարդավառ),

դ/ *սովորույթակարգ՝* հնուց եկող սովորույթի վերապրուկներ (զոհաբերություն / մատաղ, տապլա),

ե/ *հնուց եկող հավատալիքներ, աղոթքներ, օրհնանքներ, ծեսեր, ավանդույթներ:*

Այսպիսով, հայոց պատմության Առաքելական շրջանում դեռևս գործում էր հեթանոսական դիցապաշտական համակարգը, որը, չնայած նոր կրոնի ընդունումը 4-րդ դ. սկզբներին, այնքան էր ներծծված ժողովրդի կյանքում, կենցաղում, աշխարհընկալումներում, որ ժամանակի ընթացքում տարրալուծվեց ու ձևափոխվո՞ծ տարբերակներով միախառնվեց քրիստոնեական աշխարհայացքին, ազգային երանգ հաղորդելով վերջինիս և շատ երևույթներ հասցնելով մինչև մեր օրերը: